# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am


09.05.2018թ. N____________________

## Շ Ն Ո Ր Հ Ա Վ Ո Ր Ա Կ Ա Ն   Ո Ւ Ղ Ե Ր Ձ

***ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ***

Ձերմ բարեմաղթանքներով շնորհավորում եմ Հաղթանակի և խաղաղության տոնի կապակցությամբ:

Մայիսի 9-ը յուրօրինակ կերպով ամբողջացնում է հայ ժողովրդի հաղթական ոգու և հերոսական նկարագրի ուրույն բնորոշումները, որոնք արժանի են ամենայն հարգանքի ու գնահատանքի:

Ցանկանում եմ, որ մայիսյան բոլոր հաղթանակներն իրենց բացառիկ ներկայությամբ նպաստեն նորօրյա սերնդի հայրենասիրական դաստիարակությանը և հաստատուն հաջողություններ պարգևեն այդ կարևորագույն գործընթացի իրականացմանը:

Տոնական այս օրվա շրջանակներում հերթական անգամ պետք է փառաբանենք այն քաջարի հայորդիներին, ովքեր իրենց սխրագործություններով կերտել են բոլոր բաղձալի հաղթանակները:

Կրկին շնորհավորում եմ ու մաղթում, որ մեր հայրենիքի սահմանները մշտապես լինեն ամուր և խաղաղ:

***Հարգանքներով***

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ